Լևոն Խեչոյան

Խոզը

Մուկուչ հորեղբորս էինք բերում բանտից: Դեռ գյուղ չհասած՝ հորեղբայր Մուկուչս մեքենան կանգնեցրեց: Ասաց . «Մենք ոտքով կգանք»: Մյուսները գնացին, մինչեւ մեր գյուղ հասնելը, գառը մորթելու: Ցորենի դաշտերի միջով էինք գնում, կապուտակ երկնքից, հրաձգարանի խաղալիքների նման, կախվել էին արտույտները: Հեռվում, դեղինի մեջ, մի կանաչ ծառ կար: Ծառի տակ Օվանեսենց Միրիանն էր պառկած: Հորեղբայրս ասաց . «Մեռած է»: Ասաց . «Դու մնա, ես գնամ գյուղխորհրդի նախագահին կանչեմ»: Ասի . «Վախենում եմ»: «Ապրողին վայել չէ՝ թողնի ու գնա: Լավ կլինի մեզանից մեկը մնա մոտը,– ասաց,– վայրի կատուները կամ աղվես-մաղվես կարող է մոտենան՝ այլան դակեն»: Մի հատ մրջյուն վերցրեց շյուղի վրա, թողեց Միրիանի դեմքին: Ասաց . «Տեսնո՞ւմ ես, մրջյունը չի մնում, իջնում է ցած, որովհետեւ հողը տաք է, քարը տաք է, կանաչը տաք է, իսկ դեմքը պաղ է: Նշանակում է՝ մեռած է, վախենալու բան չկա: Հասկանո՞ւմ ես, իմ մնալը հարմար չէ, կկաս կածեն, նորից կկանչեն: Հոգնել եմ էդ կյանքից: Դու խատուտիկներին թոցրու՝ ես գնամ ու գամ»: Ասի . «Մեռած մարդ չեմ տեսել»: «Լավ, դու էն հեսանի վրա միզի, մինչեւ չորանա, հետ կգամ»: Ասի . «Չեմ կարող, վախենում եմ»: Ասաց . «Էն ժամանակ ինձ որ տարան, դու փոքր էիր, չես հիշի, պատճառը Միրիանն էր, հիմա հարմար չէ, որ ես մնամ»: Ասի . «Հեսանը նրանն է, համ էլ մինչեւ չորանա, կվախենամ»: Հորեղբայր Մուկուչս նստած տեղից ծնկի չոքեց, վերնաշապիկը հանեց, գլխից քաշեց շապիկը, ասաց . «Տեսնո՞ւմ ես, էնտեղ վեց օր ու գիշեր պառկել եմ փորիս, որ տղաները մեջքիս եկեղեցի դաջեն…»: Ասաց . «Տեսա՞ր, դու էլ վախեցար, այ վախը դա է…»:

Նրա մեջքին՝ ծոծրակից մինչեւ գոտկատեղը, խոշոր ականջներով խոզ էր դաջված՝ իր տասը խոճկորներով: Ասաց . «Ո՞վ էր սպասում, որ սիրտն ու թիկունքը իրար այդքան մոտիկ եւ դավա ճանություն կատարվի: Նրանք դաջում են, ես՝ սպասում: Մի օր չէ, երկու օր չէ, նրանք դաջում են… Յոթերորդ օրն իմաց վեց Մբաղնիքում: Տղաները շուրջդ կանգնած են, դու մերկ, մեջքիդ նկարը բոլորի աչքի առաջ, ստամոքսս բերանիցս դուրս էր թռչում: Տեսնո՞ւմ ես, չեմ վախենում, ապրում եմ»: Ասի . «Բա ձեռ ներդ ինչի՞ են դողում, ճակատիդ էլ քրտինք կա»: Հետո երկուսով միզեցինք Միրիանի հեսանի վրա, հորեղբայր Մուկուչս գնաց գյուղ: Սպասում էի, թե քարը երբ կչորանա, որ նա գա: Հետո կարմիր պուտերով զատիկը իջավ ավելուկի տերեւներից ու անցավ Միրիանի դեմքի վրայով, ցորենի դաշտից լոր թռավ, ես վախեցա:

Ազգական, գյուղացի, բոլորը մեր տուն, ինձ տեսության եկածները հաստատապես պնդում էին, որ իմ ընկնավորության պատճառը հորեղբայր Մուկուչս է: Զեքալ ձալոն ասաց . «Օձի շապիկ որ դնենք բարձի տակ, ընկնավորությունը կանցնի»: Ասաց . «Չեմ հասկանում, ինչ խելք է, մատրմ երեխան մեռելի հետ կթողնե՞ն»: Մայրս ասաց . «Տղան ցավի տեր դարձավ…», ու լացեց:

Մի օր դիրեկտորը կանչեց իր առանձնասենյակը, ասաց . «Գրականության դասաժամին էր պատահել, չէ՞, երեխեքն էլ են վախեցել, ուսուցչուհին էլ: Այդպիսի հոգեկան հիվանդների հա մար հատուկ դպրոց կա: Ձերոնք որ ուզեն, քեզ կտանեն այն տեղ…»:

«Չեմ հասկանում, ի՞նչ կա վախենալու: Այդ որ պա տա հում է, ձիեր են գալիս, ու կառքը սլանում է»: Ասաց . «Ախալքալաքում այդպիսի դպրոց կա, համ տանը մոտիկ կլինես, համ էլ գնացող եկող կլինի»: «Ախալքալաք ի՞նչ գործ ունեմ, ես տատիս ծոցն եմ քնում»: Ասի . «Ախալքալաք չեմ գնա…»: «Այդ տարիքիդ տատիդ ծո՞ցն ես քնում»: Դասամատյանը վերցրեց, ասաց . «Բոյիդ նայե՞լ ես, վաղվանից դպրոց մի արի»: Ասաց . «Չգաս»:

Այդ օրը սեղանի շուրջը նստածները լուռ էին: Ասի . «Մեղք չունի, նա ինքն էլ է վախեցած»: «Ո՞վ»,– հարցրեց պապս: «Մուկուչս»,– ասի,– էնտեղ, բաղնիքում հոհոացել են, ինքը վախից հետ է տվել, նրա մեջքին նկար կա…»: Ասին՝

պատմիր: Պատմեցի: Պապս ծխեց, երկար չէր խոսում, հետո անորոշ, ոչ ոքի չուղղված, որպես խոսք, ասաց . «Խոզ»:

Երկու օր հետո ջրաղացքարն էին զինգում, Մուկուչիս մեղքով հորեղբայր Դարչոյիս երկու մատները մնացին քարի տակ ու պոկվեցին: Դարչոս կտրված մատներով ձեռքը սեղմեց աջ թեւատակը: Կքակզեց, բարձրացավ, նայեց հորեղբայր Մուկուչիս աչքերի մեջ ու ասաց . «Խոզ»: Ասաց . «Այսպես քաղ անել կլինի՞, ինչպե՞ս պիտի քաղ անեմ»: Հավաքված օտարների ներկայությամբ ասաց . «Գիտե՞ք, մեջքին էլ նկար կա…»:

Թեւատակից արյուն էր հորդում: Արյունը հոտ ուներ, ես ընկա: Այդ օրը Մուկուչս հարբեց . գյուղի ծայրամասում, գյուղից կտրված, մուսուլման փնթի մի կին էր ապրում: Տարիներ առաջ նրա հովիվ ամուսինը մահացել էր, գնաց նրա տուն: Առավոտյան դուրս եկավ . ինքը արեւին էր նայում, հավաքվածները՝ նրան: Ներսում մանր երեխաների բազմություն էր լացում, ինքը, կոշիկները սեղմած թեւատակը, հեռանում էր: Հավաքվածները ասին . «Խոզ»: Ջրաղացի միջադեպին ներկա եղածներից մեկն ասաց . «Մեջքին նկար կա…»: Ասաց . «Խոզ»: Հորեղբայր Մուկուչս էլ չգնաց թուրք կնոջ մոտ: Քայլեց բոլոր աղջիկ ունեցողների փողոցներով: Ոչ ոք նրան աղջիկ չէր տալիս: Մեր դասարանցիք ինձանից վախենում էին ու մեր տուն չէին գալիս, բայց ինձ համար փողոցում Մուկուչ հորեղբորս հետեւից քար էին նետում, գոռում . «Մի հատ ցույց տուր մեջքիդ նկարը, խոզ…»:

Բրիգադիր Վասոն աշխատանքի չէր կանչում, ասում էր . «Մեջտեղը ազգային խնդիր կա»: Նրան գործ չէին տալիս, որ մտածելու ժամանակ ունենա:

Գյուղացիներից, արդեն տասնը քանի տարի է, օձ տեսնողներ չէին եղել:

Մուկուչ հորեղբայրս սարերում օձի շապիկ էր որոնում, որ դնենք բարձիս տակ:

«Դպրոց կգնաս,– ասաց,– մի վախենա, էդ հիվանդությունը անցողիկ է»: «Չեմ վախենում, վախենալու բան չկա, որ մութն սկսվում է, ձիերով կառքը ինձ թոցնում է հեռու մի տեղ,– ասի,– լավ է, թոնելը լավ է, մի քիչ մթից եմ վախենում, ձիերը լավն են…»:

Անարդյունք որոնումներից հետո մի օր որոշեց հմայման ուժով հեռուներից օձերին կանչել գյուղ: Ժամերով կանգնում էր բլրի վրա ու կենտրոնացած նայում հեռուներին: Տեր Հովսեփյան ազգանունով գրվող մեկը, որպես գաղտնիք, գյուղացիներին ասաց . «Բա որ Ադամին ու Եվային գայթակղեցնողը օձին էլ քաշի-բերի մեր կողմերը, մտածե՞լ եք գյուղի բարոյական նկարագրի վրա, հենց իր օրինակով՝ գիտե՞ք, թե ինչ կլինի»: Նրան կտրականապես արգելեցին բարձրանալ բլուրները ու երկար նայել հեռուներին:

Առավոտյան երկուսով գնում էինք հիվանդանոց՝ հորեղբայր Դարչոյիս տեսնելու: Մուկուչս շփոթված կանգնեց, ես էլի էի շշմել: Հանկարծ հյուսիսից հոսող գետը սկսեց իր հունի մեջ դեպի հետ հոսել: Մուկուչս ձեռքի պայուսակը գցեց, աղաղակելով վազեց գյուղխորհրդի բակը: Բուժակ Լադոն կոլտնտեսության ցլիկներն էր կոտում, հորեղբայր Մուկուչս ավետիս տվեց: Ժողովրդի մեջ գոռաց . «Եկե՛ք, տեսե՛ք, գետը հետ է հոսում»: Չէին գալիս: Ասաց . «Հրա՛շք է, այդպիսի բան չի պատահում»:

Հավաքվածները երկնքին, պատերին, ծառերին, մի քանիսը նույնիսկ կոշիկների քթերին նայեցին: Մուկուչս ասաց . «Այդպիսի բան է՛լ չի պատահի, մի անգամ տեսեք»: Մեկի փեշից բռնեց, ուզում էր քաշելով բերել: Ասին . «Բաց թող, խոզ»: Նրան ուզում էին խփել: Դարձյալ մութը ընկավ, կառքը ինձ թոցրեց, սլանում էր: Երբ աչքերս բացեցի, գետը դարձյալ հոսում էր իր հունով՝ հյուսիսից ներքեւ: Մուկուչս, ձեռքերի վրա առած, ինձ տուն էր տանում: Ասի . «Ախալքալաք չեմ գնա, առավոտյան տանելու ենայդ դպրոցը»: Ասաց . «Միշտ կգամ քեզ տեսնելու»:

Շաբաթվա վերջում, չորրորդ դասամիջոցին, ոտինե կրկնակոշիկները քստքստացնելով, Ախալքալաքի դպրոցի բակ մտավ ծեր Գաբո տացուն՝ պապիս եղբայրը: Ասաց . «Գնանք տուն»: Նստե ցի: Ասաց . «Գնդակը գցիր, գնանք, արդեն ասել եմ էս դպրո ցի ղեկավարին, իրենց բժշկին էլ եմ ասել, քեզ կարելի է, թույլատրեցին: Քարը պաղ է, ի՞նչ ես նստել: Մեքենա ենք բերել, շուկայում գնումներ են կատարում, մի քիչ շտապիր, չուշանանք, գնդակը գցիր, գնանք»: Գնդակը վերցրեց ձեռքիցս, տվեց տղաներին, ասաց . «Տան հետեւը տանձի ծառ կար, գիտես, չէ՞: Առավոտյան տեսանք՝ Մուկուչը, մինչեւ

գոտկատեղը մերկ, այդ ծառից կախվել է…»: